«ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» առարկայի
9-րդ դասարանի ավարտական քննության ուղեցույց

2015-2016 ուստարվա ավարտական քննության համար որպես հիմք և սկզբնաղբյուր են ընդունվում «Աշխարհագրություն» առարկայի ուսումնական ծրագիրը և դպրոցական դասագրքերը:

1. ՔՆՆԱԿԱՆ ԹԵՍՏՈՒՄ ՆԵՐԱՌՎԵԼԻՔ ԲԱԺԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄՈՏԱՎՈՐ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ/h	ԲԱԺԻՆ	Համամասնություն (%-ով)
1	Ընդհանուր տեղեկություններ Երկիր մոլորակի մասին	3
2	Աշխարհագրական թաղանթը և նրա ոլորտային կառուցվածքը	17
3	Մայրցամաքներ և օվկիանոսներ	14
4	Հասարակական աշխարհագրություն	14
5	Տարածաշրջաններ և երկրներ	26
6	Հայաստան	26
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		100

2. ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ավարտական քննական թեստը բաղկացած է 35 առաջադրանքից:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ են 1-22-րդը: Այս առաջադրանքներից յուրաքանչյուրի համար տրված է պատասխանների 4 տարբերակ, որոնցից ճիշտ է միայն մեկը: Դրանց պատասխանելիս ընտրած պատասխանի համարը թեստում պետք է վերցնել շրջանակի մեջ, որից հետո «X» նշանով նշել պատասխանների ձևաթղթում:

Օրինակ՝ առաջադրանք **7. Նշված երկրներից ո՞րն է գտնվում Եվրոպայում:**

1) Չինաստանը
2) Բրազիլիան
3) Ֆրանսիան
4) Ալժիրը



Օրինակ՝ առաջադրանք **8. Ո՞ր շարքում է տրված մարզերի և մարզկենտրոնների ճիշտ համապատասխանությունը:**

1. Արագածոտն ա. Արտաշատ
2. Լոռի բ. Իջևան
3. Տավուշ գ. Աշտարակ
4. Արարատ դ. Վանաձոր

1) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
4) 1- դ, 2-ա, 3-բ, 3-գ

Կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ են 23-32-րդը:

Այս առաջադրանքների բաց թողած տեղում, գծի վրա, պետք է գրել պատասխանը, որը կարող է լինել բառ, բառակապակցություն կամ թիվ:

Օրինակ՝ առաջադրանք **24. Ինչպե՞ս է կոչվում երկրի խորքից դուրս ժայթքած, ջրային գոլորշիներն ու գազերը կորցրած մագման:**

Պատասխան՝ <u>լավա:</u>

Այս տիպի առաջադրանքների պատասխանները ևս պետք է անցկացնել պատասխանների ձևաթղթի մեջ:

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ են 33-35-րդը:

33-րդ խնդիր-առաջադրանքի լուծման ողջ ընթացքը՝ քայլերի գրանցումով, հաշվարկներով, ստացած պատասխանով, **34-**րդ և **35**-րդ առաջադրանքների հիմնավորումները մանրամասնորեն պետք է գրել առաջադրանքներից հետո բաց թողած տեղում:

Ձևաթղթում տրված է սխալ նշված պատասխանն ուղղելու 3 հնարավորություն, որից 2-ը՝ ընտրովի, իսկ 1-ը՝ կարճ պատասխանով առաջադրանքների համար:

3. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ընտրովի, կարճ և ընդարձակ պատասխանով յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավորով:

4.ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Ըստ առաջադրանքների տիպերի միավորները բաշխվում են հետևյալ կերպ.

1. **ընտրովի պատասխանով** առաջադրանքներ՝ 22 միավոր,
2. **կարճ պատասխանով** առաջադրանքներ՝ 10 միավոր,
3. **ընդարձակ պատասխանով** առաջադրանքներ՝ 3 միավոր:

5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Քննության տևողությունը 120 րոպե է:

Թեստ-գրքույկի դատարկ մասերը օգտագործվում են սևագրության համար: